

**Տ. ՍԱՀԱԿ ԱԲԵՂԱ ՇԱՔԱՐՅԱՆ**
(ավազանի անունը՝ Մանվել)

Ծնվել է 1974 թվականի նոյեմբերի 14-ին ԼՂՀ Մարտունու շրջանի Խունշինակ գյուղում:

1981-1991 թթ. սովորել և ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը:

1993-ին ընդունվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Հոգևոր Ճեմարան և 1999 թվականի մայիսի 23-ին՝ Հոգեգալստյան տոնին, ձեռամբ Տ. Ռուսան արքեպս. Գալփաքյանի, Մայր Տաճարում ձեռնադրվել է սարկավագ:

1999 թվականին, ավարտելով Գևորգյան Հոգևոր Ճեմարանը, ծառայության է անցել Վեհարանում՝ որպես ընդունարանի քարտուղար:

2000 թվականի հոկտեմբերի 11-ին պաշտպանել է «Հրեշտակաբանություն» թեմայով ավարտաճառը:

Նույն թվականի նոյեմբերի 5-ին, ձեռամբ Տ. Փառեն եպիսկոպոս Ավետիքյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա: